## ՍԵՐԲԻԱ

Պաշտօնաթերթը ամբողջովին ներկայացուց Միլան թագաւորահօր, յայտնելով իւր հպատակութիւնը և իղձը օգնելու անոր ջանից։ Ցեռոյ օրհնուեցաւ պալատը որուն ներկայ էր նաեւ Աղեքսանդր թագաւորը։

Միլան չոգաւ ի Վրանյիա, այս քաղաքիս ազատութեան առթիւ տօներուն նախագահելու, առանց իւր թագաւոր որդւոյն։

## ՍՊԱՆԻԱ

Ի Սպանիա ի նպաստ Վէյլէր զօրավարին յուզումը հանդարտեցաւ։ Ի Կուբա սպանիական փաշտ մը որուն կը հրամայէր հազարապետն Բենեաիկտոս, խորտակեց Արանգուերայի ապստամբ գունդերը և զինքը սպաննեց։ Ապըստամբ գլխաւորներէն շատերը կը մեկնին ի Համբուրգ։

Փետրուար 13ի 10,000 անձինք ցոյց մը ըրին ի Բարչելոնա, բողոքելով ընդդէմ այն տանջանքներուն, որք իբր թէ ի գործ կը դրուին եղեր ի Մոնճուիք բանտարկեալ անիշխանականաց։ Վարչութիւնը հրատարակեց որ բոլորովին սուտ են այդ տանջանաց պատմութիւնք և ամենն ալ հնարուածք։ Եւ սակայն Սպանիա ընդերկար կը յուզի այդ լուրերով, որ տխուր արդիւնքներ ունեցաւ յորս և Կանովաս Կաստիլլոյի սպանութիւնը։

Մ–Ն.

# ՆՈՒԷՐ ՄԱՆԿԱՆՑ

## ՄՈՒՐԱՑԻԿ ԱՂՋԻԿԸ

Փոքրիկ աղջիկ մ'է մուրացկան
Որ քիչ մը հաց կ'ուզէ ձեզմէ,
Տըւէք անմեղ թըշուառ աղջկան
Տըւէք տըւէք անօթի է։
Ո՜հ, աղաչանքըս մի՛ մերժէք,
Ձեր սի՛րտն ըսէ ինչու համար.
Վեց տարեկան եմ, չունիմ մայր.
Անօթի եմ ինծ գըթացէք։

Երէկ գիւղին մէջ հանդէս կար,
Բընաւ մէկուն մըտքէն չանցայ.
Բոռներ էին շուքին տակ պար,
Աւաղ, ես բան մ'ալ չըկերայ։
Ներեցէք ինծ եթէ կ'ուզեմ
Ուզածս է հաց ոչ ուրիշ բան,
Քըչիկ մը հաց է բաւական,
Ո՜հ, մի՛ չեխէք, անօթի եմ։

Դուք մի՛ կարծէք թէ չեմ գիտեր
Թ' աշխարհիս մէջ կըրել պարտիմ.
Սակայն ես շա՜տ փոքրիկ եմ դեռ,
Ա՜հ, մի՛ թողուք զիս որ մեռնիմ։
Տըւէք, տըւէք խեղճ փոքրիկին,
Նա ձեզ համար պիտ' աղօթէ,
Տուէք, շուտ տըւէք անօթի է,
Տուէք ձեզ ուրիշ մը տայ կըրկին.

## ՁՄԵՌ

Երբ ձիւն կու գայ խիստ ցուրտ ատեն,
Երբ քակէ հովը տանիքները,
Երբ սառն ոտից տակ շառաչէ,
Ծաղիկն ողբայ, ծառն աղաչէ։

«Աստուած, մի՛ զմեզ ձեռքէ ձըգեր,
Երբ գան ցուրտեր, երբ գայ ձըմեռ,
Մեր նոր ծիլերը պահպանէ
Մինչեւ քամին անցնի փըչէ»։

digitised by A.R.A.R.@

Այն ատեն նոյնպէս աղքատներ
Ողորմութեանց Տիրոջ կ'ըսեն.
«Պահէ՛ սիրուն սեր ծագուկներ,
Հովէն, ցուրտէն, շատ փոքրիկ են»։

Եւ ամենքն յետ այս աղօթքին,
Ծառն ու ծաղիկ, մայրն ու որդին
Ննջեն խաղաղ, և աչեր Տեառն
Հըսկէ պիտի անոնց վըրան։

### ՄԱՅՐԻԿԻՆ ԵՐԳԸ

ՍԻՐԵՄ ցօղին շիթեր բարդ
Եւ փեփուղկն առտըւան,
Սիրեմ վճրղէ ամպին վրան
Տեսնել ծագել օր զըւարթ.
Բայց զոր սիրեմ կաթոգին,
Երջանկութեամբ, հաւատով,
Սուրբ և քաղցրիկ գորովով
Դու ես, որդեակ իմ։

Սիրեմ գիշեր մըթագին՝
Որ պըսակէ իւր վեհ գեղ
Ակունքներով իւր թագին
Լուսաւորել ամէն տեղ։
Բայց զոր սիրեմ կաթոգին,
Երջանկութեամբ, հաւատով,
Դու ես, որդեակ իմ։

Սիրեմ տեսնել ովկիան
Կատղած վազել դէպ յերկին,
Եւ հետեւիլ լըռելեայն
Մարգին գողտրիկ առուակին։
Բայց զոր...

Սիրեմ Հաստչին տուրքն անհուն,
Զըւարթ ժըպիտը գարնան,
Ծաղկած ամառն ու աշուն
Եւ սառոյցները ձըմրան։
Բայց զոր...

Թրգմ. Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ

## ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

### ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԻՑ

ԱՂԲԻՒՐ (յունուար), Տփղիս։

Մանուկի երազը — Մ.։ — Աշխատանք (բնատպ.) — ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ։ — Լէօն կայսրն (հայկական աւանդութիւն)(շար.) — ՍԷՑԼԱՆ։ — Եթէ շող մը ըլլամ ես...(երգ) թրգմ. — Յ. Թ. ԳԱՅԵԱՆԵԱՆ։ — Ծննդեան տօնը Նիւշատելում (Զուիցերիա) — Յ. Բ. ԻՒՋԲԱՇԵԱՆ։ — Կուռք (արեւելեան զրոյց) (բնատպ.) — ԱՏՐՊԵՏ։ — Վոլ'ֆհանգ Գեօթէ (կենս.) (շար.) — ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ։ — Հերքուլէս — Օր. Ա. Ն.։ — Զուարճալիք, Հանելուկներ։

ԱՐԱՐԱՏ (Նոյ.-Դեկտ. 1897), Վաղարշապատ։

Մեղքի իսկական նշանակութիւնը։ — Աղէքսանդր Վինէի մտքերը։ — Քրիստոսի չարչարանքները Օբեր Ամմերգաուի մէջ — թրգմ. — Ս. Մ.։ — Եկեղեցական քրոնիկոն։ — Գրախօսութիւն «Եղայրական օգնութիւն Տաճկաստանում վնասուած հայերին մասին։ — Մեր երկու գրական լեզուի միութեան խնդիրը (շար. և վերջ) — Մ. ԱԲԵՂԵԱՆ։ — Համառօտութիւն Բիւզանդական կայսրների պատմութեան (Հ. Գելցերի) — թրգմ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ։ — Ի՞նչպէս պէտք է ուսումը հետաքրքրական անել — թրգմ. Գ. Ղ.։ — Մանրալուրք։ — Եկեղեցի Հայաստանեայց, — Մայր աթոռ. — Պարսկահայք — Ա. ՔՀ. ՇԱՂՕՅԵԱՆ։ — Տաճկահայք։ — Պաշտօնականք։ — Յաւելուած՝ Մովսէս Խորենացի և իւր աղբիւրները — Գրիգոր աստուածաբան — ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑ։ — Մատենախօսութիւն՝ Պատկերազարդ բն. պատմութիւն (Գ. "Հանքաբանութիւն". Հ. Գ. Մենէվիշեանի)։

ԱՐ. ՄԱՄՈՒԼ (1 փետր.), Զմիւռնիա։

Քրիստոս նոր ծնաւ — ՍԱՐԳԻՍ Յ. ՊԱԼԱՊԱՆԵԱՆ։ — Թաճային շափիղայն։ — Ի՞նչ է կեանքը — Ն. ԱՆԳԹԱՐԵԱՆ։ — Արական և իգական զուգակշիռ — ԿԱՐՄԻՐ ԴԻՄԱԿ։ — Ալֆոնս Տոտէ։ — Գրադատական «Հաւաքածոյ բն-

digitised by A.R.A.R.@